«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆՑԻ (ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/77»

ք. Երևան «07» հոկտեմբերի 2022թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Ֆարամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գերատեսչական ցանցի (տվյալների հաղորդման) տրամադրման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների

armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 7 800 000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն՝ որից 2 600 000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը նախատեսված է առաջին 365 օրվա համար, իսկ հաջորդ երկու տարիներին ծառայության մատուցումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա (հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի հավելված N 2-ով սահմանված ժամանակացույցով՝ ըստ փաստացի մատուցած ծառայությունների արժեքների և սակագների՝ հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, և (կամ) Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրերում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	ք. Աբովյան 2201, Խաղաղության 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	ՀՎՀՀ 00096001
Հ/Հ 1150001172630300	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01522459	Հ/Հ 19300-11980040100
Գլխավոր տնօրենի	Գլխավոր տնօրեն՝
ժամանակավոր պաշտոնակատար	
---------- Կ. Հովհաննիսյան	---------- Հ. Ֆարամազյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«07» հոկտեմբերի 2022թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/77»
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գերատեսչական ցանցի (տվյալների հաղորդման) տրամադրման ծառայության

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	տեխնիկական բնութագիրը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72211125/1	դրամ	Ծառայությունը պետք է տրամադրվի «OSI Layer 2» մակարդակում, ինչը հնարավորություն կընձեռի ստեղծել ժամանակակից էլեկտրոնային կառավարման վիրտուալ մասնավոր ցանց, որն ամբողջովին առանձնացված կլինի արտաքին աշխարհից և պաշտպանված կլինի արտաքին մուտքերից կամ ներխուժումներից՝ լինելով ներփակված զուտ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ներքին ցանցային ենթակառուցվածքում: Առանձնացված կապուղու հատկանիշներ՝	7 800 000	1	ք. Երևան, Զ. Անդրանիկի 1 ք. Սևան, Էներգետիկ ների 4 ք. Գյումրի, Ղարսի խճ. 25 ք. Վանաձոր, Թևոսյան 2 ք. Գորիս, Երևանյան խճ. 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բայց ոչ շուտ, քան 01.12.2022-30.11.2025թթ.:

			Հավելված 1-ում նշված է դեպի նշված հասցեներ օպտիկամանրաթելային կապուղու տրամադրում և նվազագույն արագությունների թողունակությունների ապահովում, • սիմետրիկ արագությամբ երաշխավորված (CIR) առանց տրաֆիկի որևէ սահմանափակման: Անհրաժեշտ վերջնասարքերի տեղադրում միացման յուրաքանչյուր կետերում, օպտիկամանրաթելային կապուղիների սպասարկում, բաժանորդների սպասարկման ծառայություն (Help Desk), ծառայության վերահսկում (մոնիթորինգ)՝ 24 ժամ և 7 օր ռեժիմով, • «latency» ոչ ավել քան 5 ms, • ապահովել «QinQ, STP, Ethernet over MPLS» օգտագործման հնարավորությունը ցանկացած կետում, • ինտերնետ հասանելիության տրամադրում 85մբ/վ և 5մբ/վ թողունակությամբ Ջ. Անդրանիկի 1 հասցեում (սիմմետրիկ, երկկողմանի), առնվազն 14 Real IP հասցեների տրամադրում, պահուստային ինտերնետ հասանելիության տրամադրում 10 մբ/վ թողունակությամբ, որը պետք է գործի հիմնական ինտերտետ հասանելիության խափանման դեպքում, Կատարողը պետք է ապահովի՝ ➢ ինտերնետ միջավայրում տվյալների փոխանցման անվտանգությունը և			ք. Կապան, Գործարանային 15	

			գաղտնիությունը, ➢ պաշտպանություն DDoS և նմանատիպ տեսակի հարձակումներից: ➢ տեղեկատվության փոխանակման շուրջօրյա հնարավորություն՝ ներառելով ոչ աշխատանքային օրերը և ժամերը, ➢ անհրաժեշտության դեպքում սերտիֆիկացված մասնագետների կողմից օգտվողի ինտերնետ կապի անվտանգության վերլուծություն: Զ. Անդրանիկի 1 հասցեում լրացուցիչ 2 կետի ապահովում նույն արագությամբ (տվյալների հաղորդման ծառայություն), Ղարսի խճ. 25 լրացուցիչ մեկ կետի ապահովում՝ նվազագույնը 1մբ/վ արագությամբ (տվյալների հաղորդման ծառայություն): Անհրաժեշտության դեպքում գործող հասցեների տարածքում ևս երկու կետի (տվյալների հաղորդման ծառայության) ավելացում: Հավելված 1-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի ամսեկան ոչ ավելի, քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 80 րոպեից ավելի:				
Այլ պայմաններ*							

Ծառայության մատուցումը	▪ Կատարողը պարտավորվում է երրորդ կողմին չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը: ▪ Ծառայության մատուցումը իրականացվելու է 01.12.2022թ.-ից 3 տարի ժամկետով, սակայն հաջորդ տարիների համար ծառայության մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում, կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա:

Կից ներկայացված են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության տեղամասերի հասցեները, որտեղ պետք է ապահովվեն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցումը և տվյալների հաղորդման արագությունները:

Հ/Հ	Հասցե	Տվյալների փոխանցման նվազագույն արագությունը մբ/վ
1	ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	100
2	ք. Սևան, Էներգետիկների 4	50
3	ք. Գյումրի, Ղարսի խճ. 25	50
4	ք. Վանաձոր, Թևոսյան 2	50
5	ք. Գորիս, Երևանյան խճ. 1	50
6	ք. Կապան, Գործարանային 15	50

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար

_____ Կ. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան 2201, Խաղաղության 1
ՀՎՀՀ 00096001
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300-11980040100
Գլխավոր տնօրեն՝

_____ Հ. Ֆարամազյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«07» նոյեմբերի 2022թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/77»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության*							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում**				
			I եռ. /2023թ./	II եռ. /2023թ./	III եռ. /2023թ./	IV եռ. /2023թ./	Ընդամենը
1	72211125/1	գերատեսչական ցանցի (տվյալների հաղորդման) տրամադրման ծառայություն	650000	1300000	1950000	2600000	2600000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար

---------- Կ. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան 2201, Խաղաղության 1
ՀՎՀՀ 00096001
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300-11980040100
Գլխավոր տնօրեն՝

---------- Հ. Ֆարամազյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«07» հոկտեմբերի 2022թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/77»
ծածկագրով պայմանագրի

Կատարող
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
գտնվելու վայրը ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
ՀՀ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.S.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.S.

Հավելված 3.1
«07» հոկտեմբերի 2022թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-22/77»
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն